ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
2026

ՀՈՒԼԻՍ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում փակագծերում նշված տառը:**

1) համ-նկնել, կոր-նթարդ, ան-նտել, թր-խկ **(ը)**
2) խոտհուն-, որ-կալ, երկնաբեր-, վար-կան **(ձ)**
3) խա-ամուժ, խա-ակն, խո-ռռվել, դ-նդակ **(ժ)**
4) բա-բիռ, ա-փույթ, ա-պամած, ա-բիոն **(մ)**

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *իա:***

1) միմ-յն, փաս-ն, կր-, իշ-ս
2) դաստ-րակ, քրիստոն-, քիմ-, ակադեմ-
3) օվկ-նոս, հր-կան, Կիլիկ-, խավ-ր
4) ակաց-, ալելու-, եղ-մ, միլ-ոդ

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում միասին:**

1) հրամ(կազմ), առ(այն), հինգ(մետրանոց)
2) մեծ(բրիտանական), ռուս(հայերեն), մի(անգամյա)
3) օրն(ի)բուն, շիլա(շփոթ), ճաճանչ(ոսկր)
4) ձեռք(սեղմում), կափ(կանաչ), հետ(ճգնաժամային)

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է *ու*-ն հնչյունափոխվել *ը*-ի:**

1) փրփրել, կռապաշտ, ջրարբի, արևմտյան
2) ըմպան, նշաձև, սնվել, աշնանացան
3) հրթիռ, գանգրահեր, մթնշաղ, թխպոտ
4) լրագիր, ընդեղեն, բրդոտ, գլխիկոր

5 **Ո՞ր տարբերակում է տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված:**

1) ՔՋՁԸ - 9998
2) ՁՀԷ-777
3) ՎՄԼԳ -3333
4) ՌՊԾԸ- 1958

6 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

1) յուրովի, ինքնին, յուրային, ինքնաբերաբար
2) հավակնորդ, համարձակ, հանդուգն, ըմբոստ
3) մուճակ, մաշիկ, մակույկ, հողաթափ
4) անագորույն, ժանտ, դժնի, անողորմ

7 **Ո՞ր շարքի բոլոր բառերում *ապ-* նախածանց կա:**

1) ապշահար, ապացույց, ապառաժ
2) ապերախտ, ապերասան, ապառիկ
3) ապաբախտ, ապիկար, ապստամբ
4) ապարանջան, ապակառուցում, ապաթարց

8 **Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն կա:**

1) **եռակցել**–եռքով միացնել, **թավագեղմ**–խիտ բուրդ ունեցող
2) **պաքսիմատ**–չորացրած հաց, **ոստրե**–թանկարժեք քար
3) **երե**–որսի կենդանի, **օշարակ**–մրգահյութի զովացուցիչ ըմպելիք
4) **ծիրանի**–թագավորական թիկնոց, **կոկարդ**–գլխարկի վրա փակցված նշան

9 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառակապակցություններն են դարձվածքներ:**

1) կարապի երգ, սև կաչաղակ
2) ծեր աղվես, առաջին ծիծեռնակ
3) սպիտակ ագռավ, կատվի դրախտ
4) օձի կծած, արջի ծառայություն

10 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են վերջածանցավոր:**

1) երկաթյա, ազդու, առու, ջլուտ
2) լավություն, փեսացու, նորագույն, ձեռք
3) տարեկան, բացատ, գյուղացի, մահակ
4) հոտավետ, գործոն, գառնարած, ծորակ

11 **Ո՞ր նախադասության մեջ պատճառական բայ *չկա:***

1) Հենց արեգակի առաջին ոսկեզօծ շողերն ընկնում են գիշերվա՝ մարմինդ սարսռեցնող ցրտից սառած ժայռերին, քարակաքավը ինչ-որ որձաքարի բեկորի վրայից սկսում է անընդմեջ երգել:
2) Դամբարաններից շատերն են կողոպտվել, և մեզ հասել են սոսկ կցկտուր տեղեկություններ, բայց մեկը լիովին փրկվել է՝ մեզ տեղեկացնելով հնադարյան տարաբնույթ սովորույթների մասին:
3) Վերջերս հետազոտողների մի խումբ, ուսումնասիրելով նկարում պատկերված կնոջ ուսերին գցած թափանցիկ ծածկոցը, եզրակացրել է, որ նկարը ստեղծվել է 1503-ին:
4) Հատկապես կիլիկյան գրչատների ձեռագրերը շլացնում էին իրենց ճոխությամբ՝ երբեք, սակայն, չխախտելով չափի սահմանագիծը:

12 **Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ *չկա:***

1) թագակիրներ, կողմնացույցներ, հանքահորեր, սպիեր
2) վերնագրեր, լեզվագետներ, տապանագրեր, ժանրեր
3) սարալանջեր, դրամահատներ, հողաթմբեր, վիպագիրներ
4) ռազմերգեր, մեծատուններ, լրագրեր, տոնածառներ

13 **Ո՞ր նախադասության մեջ ստացական հողով բառ կա:**

1) Երբ մահվան աստված Թանատոսը այցելում է Սիզիփոսին, վերջինս ճարպկորեն շղթայում է նրան:
2) Աղաչում եմ քեզ՝ բոլոր չարաչար ու տաժանելի Տառապանքների վիշտ ու թախիծով Լի հոգիների խնամակալիդ:
3) Աչքս փակվեր ժամանակին, Ցամաքելս չտեսնեի:
4) Ուշադրությո՛ւն դարձրեք այս պատանուն. նա բոլորիս կստիպի խոսել իր մասին:

14 **Ո՞ր նախադասության մեջ ստորադասական շաղկապ *չկա:***

1) Թեկուզ դարն է ծնում, և երկիրն է տալիս երգին շունչ ու ոգի, Բայց երգը երկրից ու դարից մի՛շտ երկար է տևում:
2) Հենց խոսում էինք այդ մասին, հորաքույրս ախ էր քաշում, արցունքները թափվում էին սև, ծալքոտած այտերի վրա:
3) Չնայած արշավախումբը փլուզման պատճառով արտաքին աշխարհից լրիվ մեկուսացման մեջ էր հայտնվել, ոչ մեկը խուճապի չէր մատնվել:
4) Նա որդուն մատնացույց արեց հետնադուռը, որ խանութից տուն էր տանում. որդին հնազանդ, շատ մռայլ տեսքով դուրս գալով խանութից, տուն մտավ:

15 **Ո՞ր տարբերակում նախադասության անդամի ձևաբանական վերլուծության սխալ *չկա:***

Մոռացած բոլոր հանցանքներս արդեն՝ Կբանան ոմանք իմ գիրքը գուցե, Կթերթեն դանդաղ, կկարդան տողեր, Տարտամ շարժումով գիրքը կգոցեն, Եվ թախիծը խոր հուշս կողողե:

1) **ոմանք** – անձնական դերանուն, **խոր** – ածական, դրական աստիճան
2) **արդեն** – ժամանակի մակբայ, **գուցե** – երկբայական վերաբերական
3) **շարժումով** – ***անհ*** հոլովման գոյական, **մոռացած** – չեզոք սեռի բայ
4) **կթերթեն** – ըղձական ապառնի, **իր** – սեռական հոլով

16 **Ո՞ր նախադասության մեջ մեկից ավելի տեղի պարագա կա:**

1) Գյուղից ներքև՝ մի բարձր ժայռի մոտ, գետն արմունկ է կազմում ու կորչում:
2) Լուսնյակ գիշերներին, երբ լեռների հովը սառնություն էր տալիս ցերեկվա շոգից խանձված դաշտերին, բարդու վրայի իր բնի մեջ հանգստանում էր արագիլը:
3) Երկար ճանապարհից հոգնած ուղևորը գլուխը հենել էր գնացքի պատուհանին և աշխատում էր մի փոքր քնել:
4) Մինչև զառիվայրի սկիզբը ճանապարհն անցնում էր փոքրիկ տափարակով:

17 **Ո՞ր բարդ նախադասության մեջ անուղղակի խնդիր ստորադաս նախադասություն կա:**

1) Արտառոց է ինձ համար, որ դրամատիկական երկը համեմատում են բամբակի, իսկ ներկայացումը՝ նրանից ստացված հագուստի հետ:
2) Նրա սև գլխարկն այնքան յուղոտ էր, որ փայլում էր սափրիչի կաշվե սրոցի պես:
3) Նա երևի չէր հավատում, որ մի որևէ մահկանացու կարող էր ինքն իրեն զրկել այդ հաճույքից:
4) Նա երբեք չէր մտածել, որ կավը, բացի թասերից, գավերից, փարչերից և աղյուսներից, կարելի էր օգտագործել և անմահության համար:

18 **Տրվածներից ո՞րը *չի* համապատասխանում Հ. Թումանյանի «Անուշ» պոեմի սյուժեին:**

1) Անուշը Սարոյի հետ փախչում է սարերը, հետո վերադառնում է հոր տուն:
2) Մոսին հետապնդում ու սպանում է Սարոյին:
3) Անուշը խելագարվում է և նետվում Դեբեդի ալիքների մեջ:
4) Աղբյուրից ուշ վերադառնալու համար մայրը պատժում է Անուշին և արգելում Սարոյի հետ հանդիպել:

19 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

1) Իմ փոքրիկ սենյակը՝ առանձին սանդուղքով ու մուտքով գտնվում էր տան երկրորդ և երրորդ հարկերի մեջտեղում, իսկ նեղլիկ պատուհանը բացվում էր հանդիպակաց տան կտուրի ուղղությամբ:
2) Այսօր էլ հիշողությանս դաշտում տեսնում եմ մեզ՝ հինգ անապաստաններիս՝ կանգնած վիթխարի մի ծանրոցի վրա:
3) Ստեղծվեց ինքնատիպ մի այբուբեն՝ իր յուրօրինակ տառերով, և հազարերեքհարյուրամյա լեզուն ձեռք բերեց սեփական գրանշանները:
4) Բյուզանդիայի՝ հին աշխարհի ամենահզոր պետության մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը հերթական եռուզեռի մեջ էր. երկրագնդի ամենատարբեր ծագերից մրցելու էր հավաքվել իմաստասերների ու գիտունների մի հոծ խումբ:

20 **Տրված նախադասություններում ո՞ր խոսքի մասով արտահայտված որոշիչ *չկա:***

- Իմ կարոտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա:
- Որ ծանրորեն օրվա մի օր արթնանում ես Եվ իմացած երկրորդ լեզուն մոռանում ես բոլորովին:
- Ասում են՝ իբր կապույտի վրա Չեն նստում ճանճեր: Լսո՞ւմ ես, Մարիա՛մ, Ինձ ներս ու դրսից կապո՜ւյտ հագցրու:

1) դերանունով
2) ածականով
3) թվականով
4) բայով

21 **Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**



1) Թեև մենք իրարից մինչև օրս գաղտնիք չունեինք, բայց վերջին ամիսներին նա զգալի կերպով լռակյաց էր դարձել, խուսափում էր խոսել այն զգացմունքների մասին, որ բռնկվել էին իր հոգում:
2) Երբ գրկում էի նրան՝ այդ նազելի էակին, և նայում լեռնային աղբյուրների նման նրա վճիտ աչուկների մեջ, տեսնում էի, որ այնտեղ մի թախծալի, երազուն կարոտ կա:
3) Օրերի մշուշից մոտենում է ինձ չոլախ Եգորը, ելնում է, ինչպես մեր ժայռերը՝ սպիտակ մառախուղի միջից, և ես տեսնում եմ նրա ցեխոտ մեջքը և կավի նման մաշկը, որ դեղնել էր քարանձավի խոնավությունից:
4) Երբ կինը հանկարծ տխրում էր, երիտասարդը նրան սրտապնդելու համար ջանում էր վստահ ու վճռական տեսք ընդունել, սակայն դա նրան միշտ չէր հաջողվում, և երբեմն ինքն էլ էր հուզվում՝ չդիմանալով լարումին:

22 **Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված բարդի:**

1) *Այդ դառնությունները խոր ակոսներ են գցում մարդու սրտի վրա՝ հավիտյան չջնջվելու համար:*
   Այդ դառնությունները խոր ակոսներ են գցում մարդու սրտի վրա, քանի որ հավիտյան չեն ջնջվելու:
2) *Ստախոսի փաստարկը մեռած մարդուն վկայակոչելն է:*
   Ստախոսի փաստարկն այն է, որ վկայակոչում է մեռած մարդուն:
3) *Հորեղբայրս, գինետնից հարբած դուրս գալով, հանդիպում է իր քրոջ որդուն:*
   Երբ հորեղբայրս հարբած դուրս է գալիս գինետնից, հանդիպում է իր քրոջ որդուն:
4) *Համբարձումը չէր վիրավորվում իր մասին արտասանված սրախոսություններից:*
   Համբարձումը չէր վիրավորվում, երբ իր մասին սրախոսություններ էին արտասանվում:

23 **Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Պերիկլես արքայի հետ Ֆիդիասի սերտ կապ ……. վատ անդրադարձավ հենց …….՝ քանդակագործի ճակատագրի վրա, և արքայի քաղաքական ……. քանդակագործը ……. անաստվածության և հափշտակություններ կատարելու համար:

(ունենալ, ինքը, հակառակորդ, ամբաստանել)

1) ունենալը, իր, հակառակորդներից, ամբաստանվեց
2) ունենալը, իրեն, հակառակորդներին, ամբաստանեց
3) ունենալուն, իրեն, հակառակորդներից, ամբաստանեց
4) ունենալուն, իր, հակառակորդներին, ամբաստանվեց

24 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Երբեմն, երբ մեկը, ճրագը ձեռքին, անցնում էր բակով, հեռվից այնպես էր երևում, ասես մթի մեջ լույսն ինքնիրեն է շարժվում ու հանկարծ հանգչում:
2. Քիչ հետո, երբ խավարը թանձրացավ, ու ճրագները մեկ-մեկ հանգան, որպես հսկումի կրակ մնացին միայն անտառի խարույկը, որի շուրջբոլորը նստոտել էին խոզարածները, և անտառապահի տնակի լուսավոր պատուհանը, որ բլուրի բարձունքից անթարթ աչքի պես նայում էր գյուղին:
3. Իսկ գետի մյուս ափին՝ գյուղի դիմացն ընկած անտառի բացատում, խարույկն էր բոցավառվում, կրակը մեկ հանդարտվում էր, մեկ վեր սլանում, և միլիոնավոր կայծեր ցրվում էին խավարի մեջ, ասես հսկա մի աստղ էր թպրտում ծառերի արանքում:
4. Օրը մթնում էր. իրար հետևից վառվում էին ճրագները:

1) 3, 2, 1, 4
2) 4, 1, 3, 2
3) 3, 2, 4, 1
4) 4, 2, 1, 3

25 **Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը *չի* գործածվել:**

Ցուրտ հեռուներում, անլռելի
Կրկեսների մեջ սրտով մոլոր
Երգում էի քո սիրելի
Եվ մեղմ երգերը որպես օրոր:

1) չափազանցություն
2) հանգավորում
3) մակդիր
4) շրջադասություն

26 **Ա. Շիրվանզադեի «Քառս» վեպի հերուսուհի Անտոնինա Իվանովնայի վերաբերյալ պնդումներից որո՞ւմ սխալ *չկա:***

1) Մոռանում է ուսանողական տարիներին դավանած իր սկզբունքները և հափշտակվում միլիոններով, ինչպես Սմբատը:
2) Բաժանվում է Սմբատից և եղբոր հետ մեկնում Մոսկվա:
3) Հաշտվում է Սմբատի հետ և նրա ու Ոսկեհատի հետ ապրում է հանքերում:
4) Տեղափոխվում է հանքերը, սովորում է հայոց լեզու և Շուշանիկի հետ նվիրվում մարդկանց լուսավորելու գործին:

27 **Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Եվ ողբացին լալահառաչ դժխեմ բախտը Հայաստանի
Եվ հուսացին արդարության մի խուլ աստծու դատաստանի:

1) «Վահագն» (Ե. Չարենց)
2) «Հայոց լեռներում» (Հ. Թումանյան)
3) «Մատյան ողբերգության» (Գրիգոր Նարեկացի)
4) «Մեր պատմիչները և մեր գուսանները» (Ա. Իսահակյան)

28 **Ո՞ր բառն է բաց թողած Վ. Տերյանի «Տխրություն» բանաստեղծության մեջ:**

Սահուն քայլերով, աննշմար, որպես քնքուշ մութի թև,
Մի …….. անցավ՝ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով…

1) ստվեր
2) աղջիկ
3) ուրու
4) անուրջ

29 **Ինչո՞ւ էր Գ. Զոհրապի «Զաբուղոն» նորավեպի համանուն հերոսը գողությամբ զբաղվում:**

1) սիրած աղջկա՝ Վասիլիկի քմահաճույքներին գոհացում տալու համար
2) դժվար փորձությունները հաղթահարելու իր բուռն ցանկությունը բավարարելու համար
3) համաքաղաքացիներից վրեժ լուծելու համար
4) ապրուստի միջոց հայթայթելու նպատակով

30 **Ա. Բակունցի նշված պատմվածքներից որի՞ բոլոր հերոսներն են, որ հանդես *չեն* գալիս իրենց անձնանուններով:**

1) «Մթնաձոր»
2) «Խոնարհ աղջիկը»
3) «Միրհավ»
4) «Ալպիական մանուշակ»

31 **Տրված հատվածը Հ. Սահյանի ո՞ր բանաստեղծությունից է:**

Կախվել է ժայռը անդունդի վրա
Եվ դարեր այդպես կախված է մնում,
Ջրերի մեջ են ոտքերը նրա,
Իսկ գլխին հոգնած ամպերն են քնում:

1) «Քարափը»
2) «Մասրենի»
3) «Անունդ տալիս»
4) «Անտառում»

32 **Ո՞ր հեղինակի որ գործից է բերված հատվածը:**

«...Նրա հոգու աչքերին երևում է աջ ձեռքի թաթ քարի վրա գրելիս, այնպես որ քարը գծերի հետքը պահում էր, ինչպես ձյունի վրա: Եվ ոչ միայն երևաց, այլև բոլոր գրերի հանգամանքները նրա մտքում հավաքվեցին, ինչպես մի ամանում»:

1) Կորյուն. «Վարք Մաշտոցի»
2) Դ. Դեմիրճյան. «Վարդանանք»
3) Գրիգոր Նարեկացի. «Մատյան ողբերգության»
4) Մովսես Խորենացի. «Հայոց պատմություն»

33 **Ո՞ր բառերի առաջին արմատն է միավանկ:**

1. փախստական, 2. մշտադալար, 3. կուսակցական, 4. ներկայություն, 5. թիավարել, 6. ալեծուփ, 7. տղամարդ, 8. ավարառու

34 **Ո՞ր նախադասություններում դերանուն *չկա:***

1. Թագավորը տագնապած ու հուզախռով հայտնում է բոլորին, որ խուճապի մեջ չընկնեն և սպասեն նոր լուրերի:
2. Ա. Բակունցն առասպելի հերոսի պես ընդամենը մի քանի տարում սովորական գյուղթղթակցից դարձավ մեծ գրող:
3. Տեսնելով ախոռապետի լկտիությունը՝ Վասակը՝ իբրև արժանապատիվ հայորդի, ապշում է և մտածում, որ հայերը երբեք նման բան չէին անի:
4. Գավառական փոքրիկ քաղաքում ավտոմեքենա տարին մեկ է երևում, իսկ փողոցներում էլ մարդ չկա:
5. Մայրը, վերջալույսի արևի շողերից աչքերը ձեռքով ծածկելով, նայում էր կածանի կեռումեռ պտույտին և սպասում, թե երբ են երևալու հարսն ու աղջիկը:
6. Արշակը սպարապետի հետ գնում է՝ շրջելու Շապուհի ախոռներում, որտեղ պահվում էին ցեղական հազվագյուտ նժույգներ:

35 **Ո՞ր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

1. վտիտ-թուլակազմ, 2. տաղտուկ-ձանձրույթ, 3. մեգ-շամանդաղ,
4. ապիկար-անխռով, 5. վճռական-հաստատակամ, 6. հավաստի-վստահելի,
7. վրդովալից-խռովահույզ, 8. ժուժկալ-դաժան

36 **Տրված բառաշարքում որո՞նք են *հոգի* բառի բառաձևեր:**

1. հոգս, 2. հոգիդ, 3. հոգեկան, 4. հոգու, 5. անհոգի, 6. հոգյակ, 7. հոգուց, 8. հոգին

37 **Որո՞նք են թերի նախադասություններ:**

1.Առավոտ է: 2.Աղայանը դուրս է գալիս տնից՝ մի որևէ բարեկամ գտնելու և պարտք վերցնելու նպատակով: 3.Փողոցում նրան հանդիպողները լուր են տալիս, 4.թե Քուռ գետը գիշերվա անձրևներից խիստ բարձրացել է և 5.ողողել քաղաքի արվարձաններից մեկը: 6.Շտապում է գետափ 7.և տեսնում է, 8.որ արվարձանի կես մասը ջրի տակ է:

38 **Ո՞ր թվերի տեղում միջակետ պիտի դրվի:**

Եղնիկը էլ չէր փախչում մեզանից(1) արդեն հասկացել էր որ իրեն չենք վնասի: Երեխաներիս հետ վազվզում էր պարտեզում նրանց հետ ճաշում նրանց հետ քնում(2) չէ որ արդեն շատ էր մտերմացել նրանց: Մի բան ինձ շատ էր զարմացնում(3) թեև եղնիկը ընտելացել էր մեզ բայց մեկ-մեկ բարձրանում էր պատշգամբ(4) լռիկ նայում էր հեռու սարերին: Ես մտածում էի(5) Խեղճ եղնիկ(6) կարոտել է իր սիրած անտառներին(7) շնկշնկան հովերի հետ վազող ընկերներին և հիմա տանջվում է մեզ մոտ: Եվ սրտանց ցավակցում էի նրան(8) նա էլ մեզ նման զգայուն հոգի ունի:

39 **Տրվածներից քանիսո՞ւմ մեծատառի գործածության սխալ կա:**

Խամսայի Մելիքություններ, Կիրոս Կրտսեր, Թադևոս առաքյալ, Գրիմ Եղբայրներ, Ջմեռային Պալատ, Հաղպատի վանք, Սուրբ Ղազար Կղզի, Հայկական Տավրոս

40 **Ընդգծվածներից քանի՞սն են կապ:**

<u>Մինչ</u> դրսում տեղի էին ունենում այս դեպքերը, զորականների պարագլուխները խորհրդակցում էին իրենց ապագա ճակատամարտի <u>մասին</u>: Հանկարծ լսվեց գնդակի ճայթյուն՝ <u>որպես</u> չարաղետ պատերազմի արձագանք, որ այս ազնվական դավադիրներն ուզում էին մղել հանրապետության <u>դեմ:</u> Տիկինը սարսռաց, նրա՝ ճայթյունի <u>պատճառով</u> առաջացած սարսափի <u>վրա</u> հյուրերը լուռ իրար նայեցին, իսկ մարկիզը <u>վեր</u> կացավ սեղանից և <u>դուրս</u> գնաց:

41 **Ընդգծվածներից քանի՞սն են ուղիղ խնդիր:**

Վեստ Սարգիսը անփոխարինելի <u>անձ</u> դարձավ պալատում, իսկ Պահլավունիները անմասնակից մնացին երկրի <u>կառավարմանը</u>: Կրկին հունական ոսկու քաղցրահնչյուն զնգոցը ստվարացրեց «հունասերների» <u>բանակը</u>, կրկին բյուրավոր դրամատենչ <u>հայացքներ</u> բաղձանքով դեպի արևմուտք բևեռվեցին: Եվ երկիրը կրկին գլորվեց իր <u>հունը</u>, իսկ կայսրության <u>գահը</u> ձեռքից ձեռք էին գլորում: <u>Միքայելին</u> կուրացրել ու բանտ էին նետել, իսկ կայսրուհին ոչ մի կերպ չէր փարատում իր <u>կասկածը</u>:

42 **Բառերից քանիսո՞ւմ -*իչ* վերջածանց *չկա:***

բաղադրիչ, բնակչություն, վայելչադեմ, կործանիչ, տեսչություն, թռչուն, արտահայտչամիջոց, ուսուցչանոց

43 **Նախադասություններից քանիսո՞ւմ բուն բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

- Հիշում եմ ինչ կտրիճ էիր դու արևակեզ զինավառ առյուծի բաշով կտրիճ:
- Քաղաքապետ իշխանը հպարտ ու վես ճոխ ու զարդարուն հագուստով այդ մարդը գալիս էր դանդաղ քայլերով շրջապատված շքախմբով:
- Մեր երեխաներիս աչքը չէր հեռանում նրանցից և ուշիուշով դիտում էինք արագիլների ամեն մի շարժումը:
- Ականավոր լեզվաբան Մանուկ Աբեղյանը ծնվել է 1865 թվին Նախիջևանի Աստապատ գյուղում:
- Հայ դրամատուրգիայի մյուս մեծությունը Շիրվանզադեն էլ է կրել եվրոպական դրամատուրգիայի ազդեցությունը:

44 **Տրված նախադասություններից քանիսի՞ դիմաց է ճիշտ տրված, թե որ հայերենով է այն:**

- Եթե հույս ունինք ապագայի վերա, նորա երևեցուցիչը դուք եք, ձեզանից կախվում է ազգի ապագան, և ձեր վերա է միակ հույսը: *-արևմտահայերեն*
- Ի համատարած ծովէն պղպըջէր գոյնն այն ծաղկին. երփին երփնունակ ծաղկին, շողշողէր պտուղն ի ճղին: *-միջին հայերեն*
- Մեծ պատահարները զիս անտարբեր կը թողուն, բայց մանր դեպքերը՝ չնչին ուրիշներու աչքին, լուրջ խորհրդածություններու նյութ են ինձի: *-արևմտահայերեն*
- Գեղեցիկ պատմուճանաւն զարդարեալ էր, ի կապուտոյ, ի ծիրանոյ, ի բեհեզոյ, ի յորդանէ ոսկեշողեր գոյնն: *-արևմտահայերեն*
- Եվ ահա բարեբեր ամառն իր պտուղները զամբյուղ առ զամբյուղ Մեր պարտեզին ծառերեն դեպի հողը և դեպի զիս կ'ընծայեր.... *–միջին հայերեն*

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. ***Ուշիմ, ճղճիմ, մտերիմ, հավատարիմ*** բառերի փակ վանկի ***ի***-ն ածանցման ժամանակ սղվում է:
2. ***Ույ*** երկհնչյուն ունեցող բառերից ոչ մեկում հոլովման կամ հոգնակիի կազմության ժամանակ ***ույ***-ը չի հնչյունափոխվում:
3. Բառավերջի ***ի***-ն կարող է հնչյունափոխվել ***յ***-ի, երբ բառին ավելանում է ***ակ*** վերջածանց:
4. Ձայնավորի՝ շեշտի հետ կապված հնչյունափոխությունը տեղի է ունենում նրա՝ շեշտից զրկվելու կամ նրանից հեռանալու պատճառով:
5. Բառասկզբի ***ի***-ն շեշտից զրկվելիս միշտ հնչյունափոխվում է:
6. ***Յու*** երկհնչյունը հնչյունափոխվելիս կարող է դառնալ ***ե:***

Բ մակարդակ

46 **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Եր-նավառ(1) քարերից կե-տված(2) առանձնարանը լուսավորվելով եր-ան(3) հանեց հինավուր-(4) արվեստի նր-աճաշակ(5) պերճանքը: Խոյակազար-(6) սյուները գոտ-որ(7) պատվանդանների վրա էին: Կամարաձև խորշերի ներսը նախշված էր հա-ճապակյա(8) աղյուսներով, իսկ դրանց ծայրերը դրվա-ված(9) էին ոսկեզ-ծ(10) եզրերով:

1) 2-ր, 5-բ, 8-խ, 10-օ
2) 3-և, 4-ձ, 6-դ, 10-օ
3) 1-փ, 3-և, 7-եվ, 9-գ
4) 2-ր, 4-ձ, 5-բ, 9-գ

47 **Ո՞ր նախադասության մեջ ուղղագրական սխալ *չկա:***

1) Իշխանուհու կոպերը, որոնք գրեթե միշտ խոնարհված էին, քողարկում էին աչքերի կենսաթռթիռ հուրը:
2) Փորձված դիտողի խորազննին հայացքը կարողանում է պարզել բնավորության սքողված գծերը:
3) Իշխանուհու նրբօրոր, բայց և շփոթահար շարժուձևը պատկերացում էր տալիս նրա՝ առեղծվածներով լի ու փոթորկահույզ հոգեվիճակի մասին:
4) Իշխանուհին մոտ երեսուն տարեկան հեզահամբույր մի կին էր, որ հայտնի էր հոգու յուրօրինակ խորությամբ ու շրջապատի նկատմամբ բարյացակամությամբ:

48 **Ո՞ր շարքի բոլոր բառերում արմատի հնչյունափոխություն կա:**

1) գետնաքարշ, գիտնական, հնձվոր, երևութական
2) քննություն, վերջնագիծ, լսափող, նստարան
3) լրջախոհ, խուսափել, ուղեկից, շրջադարձ
4) օրինապահ, ուսուցում, սրբիչ, սուզանավ

49 **Ո՞ր շարքի բոլոր բառերի արմատներին (որևէ արմատին) կարող է միանալ *տար(ա)*-նախածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:**

1) հանքափոր, կարգապահ
2) կուսակցություն, ձևական
3) կետադրություն, երկսեռ
4) դժբախտաբար, գիրանալ

50 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության կամ բառի կազմության սխալ *չկա:***

1) Դու մի՛ խառնվիր մեր գործերին. այս հարցը քեզ չի վերաբերվում:
2) Դու ինձ հրավիրեցիր քեզ մոտ իբրև հյուր և քո այդ աստանդականությունը խաբեությամբ պսակեցիր:
3) Ականակիր խավարի մեջ էին թաղվել շրջակա գյուղերը:
4) Հանդիսությանը ներկա էին ծնողներ, աշակերտներ, ուսուցիչներ և այլոք:

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:**

1) բարետես, գարեջուր, կաշեգործ, դավադիր
2) արևայրուք, լուսահորդ, կորամեջք, լուսաբաց
3) ալեծուփ, ակնածանք, հոգատար, որդեսեր
4) գինետուն, հնադար, բնավեր, լուսապսակ

52 **Ո՞ր տարբերակում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:**

1) ***դեմն առնել*** –կասեցնել, ***չինական պարիսպ***–մոռացված փաստ
2) ***գլուխ կոտրել*** –շատ չարչարվել, ***դուռը գալ*** –մեկի օգնությունը խնդրել
3) ***երկու քայլի վրա***–մոտիկ, ***ձեռքը քարի տակ*** –հնարավորությունից զուրկ
4) ***սողոմ-գոմոր***–խառնակություն, ***գույները խտացնել***–չափազանցված ներկայացնել

53 **Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ *չկա:***

1) Եվ ես արթնացա խնդության ցավից. Գիշերվա հովն էր լալիս դաշտերում:
2) Սոնան մանկության առվակի ջրե՞րն էր կարոտել, թե՞ պատահմամբ մոտեցավ հնձանի դռնակին՝ Դիլան դային չիմացավ:
3) Երբ կհոգնես, կգազազես աշխարհից, Դարձի՛ր ինձ մոտ, վերադարձի՛ր դու նորից:
4) Պատահմամբ նայեց պատշգամբի կողմը. տեսավ ինձ, հեռացավ կտուրից և խառնվեց աղջիկների խմբին:

54 **Ո՞ր շարքում բայի կազմության ձևի սխալ *չկա:***

1) դիպչող, խոնավացրեց, տուժել եմ
2) ուրախացող, սառչած, խոսող
3) փախչելով, կպցրած, նստացնել
4) շփոթեցնել, ծիծաղել եմ, թռնելիս

55 **Ո՞ր նախադասության մեջ ըղձական եղանակի բայաձև *չկա:***

1) Ամենից զվարթ ու աղմկալի երկու ոտպեներն են, մինչև ուսուցիչը մեկին կարգադրի՝ վազի՛ր, զանգը տո՛ւր:
2) Եթե փախստականները անմիջապես ճանապարհ ընկնեին, ապա ժամանակին կհասնեին քաղաք:
3) Նա սովորական հոգևորականներից ավելի ազդեցիկ էր խոսում, և զրուցակիցը ստիպված էր լինում առանց այլևայլության ենթարկվելու նրան. խոստովանում եմ՝ ես շատ բան ունեի սովորելու այդ մարդուց:
4) Ես թուքս կուլ տվի ու մտածեցի, որ լավ կլիներ, եթե իմ անգրագետ մոր փոխարեն նա լիներ իմ մայրը:

56 **Ո՞ր նախադասության մեջ չեզոք սեռի բայ կա:**

1) Հանկարծ ուժեղ քամին տան հետնադուռը բացեց՝ երևան հանելով նրանց մանրամասնորեն խնամված այգին:
2) Ժառանգական և ամուսնական դատերի համար աղերսագրերը նա արտագրում էր մի հաստափոր գրքից՝ փոխելով անուններն ու թվականները:
3) Ժայռը նիրհելով ունկնդրում է ամպերի շրշյունը, մասրենին իր ծաղկաբաժակը պահել է ոսկեզօծ արևի տակ:
4) Այս հեռագիրը տվել էր երևի նրա համար, որ այլևս չձանձրացնեմ իրեն նոր նամակներով ու հեռագրերով:

57 **Ո՞ր նախադասության մեջ մեկից ավելի անկատար ձևաբայ կա:**

1) Որոտանի կիրճ ասելիս Ես կիրճի պես խորանում եմ, Ես սրբերի խորանում եմ Որոտանի կիրճ ասելիս:
2) Գլուխներս առած գնում ենք այսպես, Մինչև մոլորված մեր ոտքը գայթի, Եվ ընկնենք խորունկ անդունդն անհատակ:
3) Ի՞նչ են շշնջում Ակներից փախած Իմ առվակները. Վեր կենամ գնամ, Գտնեմ ակները:
4) Չարերի հետ նստում հացի Ու ժխտում է չարը Այս չարչարված, չարագուշակ Ու չարխափան դարը:

58 **Ո՞ր շարքի բոլոր բառերի գործիական հոլովը կարող է կազմվել *բ*-ով:**

1) արյուն, կատաղություն, կատարում
2) երդում, անկյուն, սյուն
3) անուն, մաս, խիզախություն
4) խափանում, նորություն, իրավունք

59 **Ո՞ր նախադասության մեջ մեկից ավելի դերբայական դարձված կա (նախադասությունները կետադրված չեն):**

1) Մեկը բարձրահասակ էր խոժոռված դեմքով և թանձր ու երկայն մորուքով իսկ մեջքին ուներ արևի նման փայլփլող մի լայնաբերան դաշույն:
2) «Թոմսոնի խրամ» մենք անվանում էինք գետի կանգնած տեղը որտեղ ջուրն սկսում էր լճանալ:
3) Մի վարձկան գետնին նստած գարեհաց էր ուտում իսկ ցենտուրիոնները անցուդարձ անելով զրուցում էին:
4) Թղթադրամները տալով կառապանին ես քաշվեցի նեղ փողոցներից մեկի անկյունը և ազատություն տվեցի երկար ժամանակ զսպված արցունքներիս:

60 **Ո՞ր նախադասության մեջ հատկացուցիչ կա:**

1) Վերջապես վերադարձան նաժիշտները՝ արծաթե սկուտեղի վրա բերելով ընտիր պտուղներ:
2) Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է. ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում:
3) «Գայանե» բալետը ձևավորելիս Մինաս Ավետիսյանն աշխատեց մոտ մեկ տարի՝ ծախսելով շուրջ երեք տասնյակ կտավի համար պահանջվող ջանք:
4) Շահ-Աբասը սիրով լսեց նրա խնդրանքը, բոլոր հանգամանքների մասին տեղեկություն առավ նրանից:

61 **Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:**

1) Մոտալուտ աղետի մի սարսափ. Սարվարդի լճերն են ցամաքում, Ընկնում են հույսերս թևաթափ:
2) Մանում ու հեքիաթ ես ասում, Մանում ես անվերջ ու արագ. Սիրում եմ պարզկա քո լեզուն, Ձեռքերդ՝ մաշված ու բարակ:
3) Երևի բան է պատահել. Երևի տարիներն անսիրտ Իմ սրտի կրակը տարել, Տարել են ու հետ չեն բերել:
4) Դու քո խաղողի նման ես եղել. Կոտրատել են քեզ, հողի մեջ թաղել, Բայց երբ անցել են ցրտերը ձմռան, Կորված ճյուղերդ ես վերստին ուղղել:

62 **Ո՞ր նախադասության մեջ կոչական կա (շեշտերը դրված չեն):**

1) Այո, սրանք՝ այս զինվորները, և ուժ են, և հույս, և կյանք:
2) Աստված մարդուն տվել է ուշիմություն, բարեփոխվելու հնարավորություն, և մարդը, գիտակցելով այդ, պետք է ճգտի կատարելության:
3) Եվ մի՞թե այդ վշտիդ համար Չեմ սիրում քեզ այդպես քնքուշ Եվ խոնարհվում քեզ պես համառ, Օ՜, հայրենիք՝ դառն ու անուշ:
4) - Վերցրու որբին,- ասաց ինձ քուրդը՝ լսելով Միսակի երգը,- քո կես ոսկին էլ հարկավոր չէ. նրա երգը ոսկուց էլ զորավոր էր:

63 **Ո՞ր տարբերակում փակագծերում տրված բնորոշումը ընդգծվածին *չի* համապատասխանում:**

1) Դուք ուզում եք փրկել ձեր հոգիները և <u>ցույց տալ</u>, որ թագավորի պաշտպաններն եք: *(բառակապակցություն)*
2) Այդ միջոցին մեր դիմաց երևաց հարբած նավաստիների մի խումբ, որ <u>երգելով, պարելով</u> առաջ էր գալիս: *(բազմակի անդամներ)*
3) <u>Ինձ համար պարզ էր</u>, որ նա հիվանդի խոսքերին նշանակություն չէր տալիս, կարծես նույնիսկ չէր հավատում նրա հիվանդությանը: *(նախադասություն)*
4) Չկար այլևս նրա ձայնի մեջ խրոխտություն, և <u>խոսքերի մեջ՝ արագություն</u>. կարկուտը հալվել էր տարիների սառնության մեջ: *(նախադասություն)*

64 **Ո՞ր նախադասության մեջ բուք *չպիտի* դրվի:**

1) Երեք ամիս է քեզ չեմ տեսել և ամեն օր չարացել եմ քեզ վրա:
2) Բոլորն էլ գնացին իրենց տները որևէ համեղ բան բերեն Մեք-Գրեգորը նրանց խոստացել էր մի լավ բան նվագել:
3) Մինչև ես բարձր կանչեցի և ձիու սանձից բռնած վազեցի սանդուղքի կողմը պապս արդեն թափ էր տալիս փեշերը:
4) Հեղհեղուկ հանդիսատեսը իր պաշտամունքի առարկա կուռքի տապալումը տեսնելիս մոռանում է երեկվա իր հիացմունքը:

65 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված Սայաթ-Նովայի միայն այն բանաստեղծությունների համարները, որոնք սիրո երգեր են:**

1. «Դուն էն գլխեն իմաստուն իս», 2. «Աշխարումս ախ չիմ քաշի», 3. «Թամամ աշխար պտուտ էկա», 4. «Աշխարս մե փանջարա է»

1) 1, 3, 4
2) 1, 2
3) 2, 3
4) 2, 3, 4

66 **Պ. Դուրյանի ո՞ր բանաստեղծությունն է ավարտվում «Աստուծո ծաղրն է Աշխարի ալ արդեն...» տողով:**

1) «Լճակ»
2) «Սիրել»
3) «Տրտունջք»
4) «Իմ ցավը»

67 **Ո՞ր նախադասություններում մակբայ *չկա:***

1. Նույն վայրկյանին ներս մտան երկու մութ պատկերներ՝ գիշերային ոգիների նման լուռ, հապճեպ գրկեցին ճերմակ տեսիլն ու չքացան նրա հետ:
2. Մենք դիտմամբ փորձում էինք ջղայնացնել նրանց, սակայն չէր հաջողվում:
3. Մեր վարպետներն են հնուց տուֆ սիրել և այն վերածել նախշազարդ քարի:
4. Այնտեղ՝ կապուտակ ջրերի ծոցում, իր խաղաղ օրերն էր անցկացնում էն քաջն անվեհեր:
5. Երազ աշխարհում Ամեն բան հավետ Գալիս է, գնում Ու ցնդում անհետ:
6. Ինձ դիմավորեց գունատ դեմքով մի պատանի և առաջնորդեց մի ուրիշ սենյակ, որտեղից արագ քայլերով հեռանում էր մի կարճահասակ ծերունի:

68 **Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Կյանքը Երկրի վրա սկիզբ է առել աստիճանաբար Երկրի գոյացումից շատ ու շատ տարիներ անց: Երկրակեղևը սառել ու պնդացել է միլիարդավոր տարիների ընթացքում: Ջրային գոլորշիները խտացել և տաք անձրևի տեսքով թափվել են Երկրի վրա, ապա աստիճանաբար սառել է նաև ջուրը: Այդ ժամանակ արդեն ջրում կային բազմազան քիմիական նյութեր, որոնցից առաջացան ավելի բարդ քիմիական միացություններ: Ապա դրանցից կազմվեցին սպիտակուցի մոլեկուլներ, որոնք աստիճանաբար սկսեցին սնվել՝ կլանելով ջրում լուծված նյութերը, դրանցով կառուցել իրենց սպիտակուցավոր մարմինները, իսկ թափոնները նետել դուրս: Մարմինները հնարավորություն ստացան կիսվելու միջոցով աճելու և բազմանալու: Այդպես համաշխարհային օվկիանոսի օրորոցում անհիշելի ժամանակներում ծնվեց կյանքը: Բնության հարափոփոխ արվեստանոցում սպիտակուցի փոքրիկ կենդանի գնդիկից միլիարդավոր տարիների ընթացքում առաջացան այսօրվա աներևակայելիորեն բազմազան կենդանի էակները: Բոլոր օրգանիզմների միջև նմանությունը թույլ է տալիս ենթադրել, որ նրանք ընդհանուր նախնի են ունեցել, որից և առաջացել են կենդանի մյուս օրգանիզմները:

1. Ամենատարբեր կենդանի էակների՝ միևնույն նախնուց առաջացած լինելու վարկածը ծագում է նրանց օրգանիզմների նմանությունից:
2. Միլիարդավոր տարիներ առաջ ջրում առկա քիմիական նյութերը ավելի բարդ բաղադրություն ունեին, քան առաջին սպիտակուցային գնդիկները:
3. Համաշխարհային օվկիանոսում առաջացած փոքրիկ կենդանի գնդիկները, միլիարդավոր տարիների ընթացքում փոփոխվելով, առաջացրել են ներկայիս կենդանի աշխարհի բազմազան ձևերը:
4. Առաջին սպիտակուցավոր մարմինները կիսվում ու բազմանում էին սնվելու և թափոնները դուրս նետելու միջոցով:
5. Երկիրը իր առաջացումից հետո երկար ժամանակ եղել է անկյանք մոլորակ, մինչև երկրակեղևի վրա գոյացել են սպիտակուցի մոլեկուլները, ապա և կենդանի էակները:

69 **Ո՞ր տարբերակներում է նախադասության անդամի պաշտոնը սխալ տրված:**

Լեռան գագաթին թառած այդ անմատչելի ամրոցը, որ երեկոյան՝ մութն իջնելուն պես, սարսռազդու տպավորություն էր թողնում ամեն անցորդի վրա, մոտեցող իշխանի սիրտը տխրությամբ համակեց:

1. **մութն** – ուղիղ խնդիր
2. **տխրությամբ** – միջոցի խնդիր
3. **թառած** – որոշիչ
4. **իջնելուն պես** – ձևի պարագա
5. **տպավորություն էր թողնում** – բաղադրյալ ստորոգյալ
6. **անցորդի վրա** – տեղի պարագա

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Ձայնարկությունները նախադասության անդամ չեն դառնում:
2. Ձայնարկություններից կարող են կազմվել գոյականներ, ածականներ և բայեր:
3. Բոլոր բնաձայնական ձայնարկությունները արմատի կրկնությամբ կազմված բառեր են:
4. ***Ախ, վայ, ցավոք*** բառերը ձայնարկություններ են:
5. Ձայնարկությունների վրա շեշտ չի կարող դրվել:
6. Ձայնարկություններն արտահայտում են խոսողի դատողական վերաբերմունքը: